Տեղի ունեցավ ասմունքի հանրապետական մանկապատանեկան 8-րդ մրցույթ-փառատոնի Վայոց ձորի մարզային փուլը

13.11.2014

2014 թվականի նոյեմբերի 12-ին Եղեգնաձորի մարզային մշակույթի կենտրոնի համերգային դահլիճում կայացավ ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի հովանու ներքո անցկացվող ասմունքի հանրապետական մանկապատանեկան ամենամյա մրցույթ-փառատոնի Վայոց ձորի մարզային փուլը, որն այս տարի նվիրված էր Հովհաննես Թումանյանի 145 և Ավետիք Իսահակյանի 140-ամյա հոբելյաններին: Ասմունքի փառատոնի նախնական լսումներին մասնակցել են Վայոց ձորի մարզի 50 կրթօջախների 860 աշակերտներ, տարածաշրջանային փուլին՝ 140-ը, որոնցից մարզային փուլ էին անցել 40-ը: Ժյուրիի կազմում էին լրագրող, փառատոնի պատասխանատու քարտուղար Մարիետա Մակարյանը, անվանի բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը, ՀՀ ժողովրդական արտիստ Գուժ Մանուկյանը, ՀՀ վաստակավոր արտիստ Սարգիս Նաջարյանը, ՀՀ վաստակավոր արտիստուհի Էվելինա Շահիրյանը, դերասան Ջուլիետա Բաբայանը, Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրեն, գրականագետ Կարո Վարդանյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Արփիար Ղազարյանը, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Սոնա Մարգարյանը:
Ներկաներին ողջունեց ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մելս Հարությունյանը: ՀՀ Վայոց ձորի մարզպետի անունից մարզպետի տեղակալը պատվոգրեր հանձնեց մարզային փուլում հաղթած այն դպրոցականներին, ովքեր իրավունք ստացան մասնակցելու փառատոնի հանրապետական փուլին: